Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԻ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«02» 09 20/3թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԶԱՏՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կանոնակարգը սահմանում է հիմնական, համատեղության և ժամավճարային կարգով համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման, աշխատանքի ընդունման, ազատման կարգը:

1.2 Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, ազատումը, դասավանդողների հետ իրավահարաբերությունները կարգավորում են պայմանագրային հիմունքներով՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն կանոնակարգով:

2. Պրոֆեսորադասախոսական տարակարգեր

2.1 Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են հետևյալ տարակարգերը՝ պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս և ասիստենտ:

2.2 *Պրոֆեսորի* պաշտոնում կարող են նշանակվել անձինք, ովքեր ունեն համապատասխան մասնագիտության դոկտորի գիտական աստիճան և /կամ պրոֆեսորի գիտական կոչում:

2.3 *Դոցենտի* պաշտոնում կարող են նշանակվել անձինք, ովքեր ունեն համապատասխան մասնագիտության գիտական աստիճան և /կամ դոցենտի գիտական կոչում:

2.4 *Ավագ դասախոսի* պաշտոնում կարող են նշանակվել գիտական աստիճան ունեցող կամ համապատասխան մասնագիտության գծով ասպիրանտուրան կամ օրդինատուրան ավարտած անձինք:

2.5 *Դասախոսի կամ ասիստենտի* պաշտոնում կարող են նշանակվել անձինք, ովքեր ունեն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճան:

2.6 Համալսարանում վարչական աշխատանքով զբաղված դասախոսները համատեղության կարգով կարող են պահպանել պրոֆեսորադասախոսական իրենց տարակարգը և մասնակցել պրոֆեսորադասախոսական պաշտոնների տեղակալման գործընթացին:

3. Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների նշանակման չափանիշները

3.1 Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման չափանիշներն են՝

- բարձրագույն և/կամ հետբուհական մասնագիտական կրթության որակավորումը
- գիտական աստիճանը, գիտական կոչումը,
- ուսումնական, մանկավարժական փորձառությունը, գիտահետազոտական, ուսումնամեթոդական գործունեության ձևերը և արդյունքները,
- որակավորման բարձրացումը և վերաորակավորումը,
- դասավանդողի գործունեության արդյունավետության գնահատումը:

3.2 Ըստ տարակարգերի սահմանված են ուսումնական, գիտահետազոտական գործունեության հետևյալ չափանիշները.

- *Պրոֆեսորի համար:* Պրոֆեսորի պաշտոնին կարող են հավակնել պրոֆեսորի գիտական կոչում կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձինք:

  Պրոֆեսորի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը՝ դասախոսությունների և գործնական պարապմունքների վարում, գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների, ուսումնական ձեռնարկների պատրաստում և հրատարակում, զեկուցումների պատրաստում հանրապետության և միջազգային գիտաժողովների շրջանակներում, ամբիոնի գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների մասնակցություն, ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:
- *Դոցենտի համար:* Դոցենտի պաշտոնին կարող են հավակնել դոցենտի գիտական կոչում կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձիք:

  Դոցենտի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը՝ դասախոսությունների և գործնական պարապմունքների վարում, գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների իրականացում, ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում, հետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում, հանրապետական և միջազգային գիտաժողովներում զեկուցումների ներկայացում, ամբիոնի ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասնակցություն:
- *Ավագ դասախոսի համար:* Ավագ դասախոսի պաշտոնին կարող են հավակնել գիտական աստիճան ունեցող կամ համապատասխան մասնագիտության գծով ասպիրանտուրան ավարտած անձինք:

  Ավագ դասախոսի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը՝ դասախոսությունների և գործնական պարապմունքների վարում, գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների իրականացում, ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում, հետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում, հանրապետական և միջազգային գիտաժողովներում զեկուցումների ներկայացում, ամբիոնի ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասնակցություն:

- *Դասախոսի կամ ասիստենտի համար:* Դասախոսի կամ ասիստենտի պաշտոնին կարող են հավակնել գիտական աստիճան ունեցող կամ համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք:

  Դասախոսի կամ ասիստենտի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը՝ դասախոսությունների և գործնական պարապմունքների վարում, քննությունների և ստուգարքների անցկացում, անհատական աշխատանքների ղեկավարում, գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության իրականացում:

4. Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կարգը

4.1 Պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է մասնագիտական ամբիոնի համապատասխան հիմնավորմամբ ներկայացրած թեկնածուի առաջադրմամբ և ընտրությամբ:

4.2 Պաշտոնի հավակնորդի թեկնածության համապատասխան հիմնավորումը և հավակնորդի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ամբիոնի վարիչի կողմից ներկայացվում է համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, ով փաստաթղթերի փաթեթը ուսումնասիրելուց հետո ռեկտորի հաստատմանն է ներկայացնում հավակնորդի թեկնածությունը: Ռեկտորի դրական որոշման դեպքում աշխատանքային պայմանագիր է կնքվում հավակնորդի և համալսարանի միջև:

4.3 Բոլոր թափուր պաշտոնների տեղակալումն իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի:

4.4 Հավակնորդը դիմումին կից ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը

- անձնական թերթիկ՝ լուսանկարով,
- անձնագրի պատճենը,
- սոցիալական քարտի պատճենը,
- աշխատանքային գրքույկի քաղվածքը,
- ինքնակենսագրությունը,
- գիտական աշխատությունների ցուցակը,
- վավերացված դիպլոմի պատճենը,
- վավերացված դիպլոմի միջուկի պատճենը,
- վավերացված գիտական աստիճանը հաստատող փաստաթղթի պատճենը,
- վավերացված գիտական կոչումը հաստատող փաստաթղթի պատճենը,
- վերապատրաստումները հաստատող փաստաթղթեր:

5. Պայմանագրի լուծումը

5.1 Պրոֆեսորադասախոսական կազմի հետ պայմանագրի լուծման հիմք կարող են լինել՝

- համալսարանի հետ կնքած պայմանագրում նշված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը,
- ամբիոնի մասնագիտական եզրակացությունը,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում: